**Հավելված 1**

**Վարչության 2021թ. Հուլիսի 22-ի թիվ 01/055-481 Լ որոշման**

| | | |
|---|---|---|
| | **«Ջերմ Օջախ» էներգաարդյունավետ վերանորոգման միկրովարկերի վարկավորման պայմաններ** | |
| 1 | **Հիմնական պայմաններ** | |
| 1.1 | Վարկի տեսակը | **«Ջերմ Օջախ» էներգաարդյունավետ վերանորոգման միկրովարկ** |
| 1.2 | Վարկի նպատակ* | Բնակելի անշարժ գույքի վերանորոգում/բնակարանային պայմանների բարելավում<br><br>(վերանորոգման նյութերի/պարագաների, էներգաարդյունավետ սարքերի ձեռքբերում, էներգաարդյունավետ միջոցառումների իրականացում՝ համաձայն http://www.jermojakh.com/hy/ առցանց գործիքի ) |
| | | ՀՀ ամբողջ տարածքում՝ բացառությամբ Երևան քաղաքի Կենտրոն համայնքում, գտնվող բնակելի անշարժ գույքի վերանորոգման նպատակով |
| 1.3 | Տարեկան անվանական տոկոսադրույք | 11.0% |
| 1.4 | Առավելագույն փաստացի | 16.7% |
| 1.5 | Տոկոսադրույքի տեսակ | հաստատուն |
| 1.6 | Վարկի ժամկետ | 60-120 ամիս |
| 1.7 | Վարկի արժույթ | ՀՀ դրամ |
| 1.8 | Վարկի գումար | 500,000-3,000,000 ՀՀ դրամ |
| 1.9 | Վարկի մայր գումարի մարման արտոնյալ ժամանակահատված (ոչ պարտադիր)** | 6-12 ամիս |
| 1.10 | Վարկի տրամադրման միանվագ միջնորդավճար | չի սահմանվում |
| 1.11 | Վարկային հայտի ուսումնասիրության վճար | 5,000 ՀՀ դրամ |
| 1.12 | Վարկի սպասարկման ամսական վճար | վարկի մնացորդի 0.3% |
| 1.13 | Վարկի և տոկոսագումարի մարումներ | Արտոնյալ ժամանակահատվածում՝ միայն տոկոսագումարի ամենամսյա մարում<br>Արտոնյալ ժամանակահատվածի ավարտից հետո՝ վարկի գումարի և տոկոսագումարի ամենամսյա հավասարաչափ մարում (անուիտետ) |
| 1.14 | Վարկի տրամադրման եղանակ | Անկանխիկ, բանկային հաշվին փոխանցման միջոցով |
| 1.15 | Բանկային հաշվի բացում/քաղվածքների տրամադրում | Համաձայն Բանկում գործող Բանկային հաշիվների բացման և սպասարկման սակագների ու պայմանների |
| 1.16 | Վարկի գումարի կանխիկացում/փոխանցում | Համաձայն Բանկում գործող Ֆիզիկական անձ հաճախորդների բանկային փոխանցումների և վճարումների սակագների ու պայմանների |
| 1.17 | Հայտի և փաստաթղթերի ընդունման վայր | Բանկի բոլոր մասնաճյուղեր, գլխամասային գրասենյակ |
| 2 | **Ընդհանուր պայմաններ** | |
| 2.1 | Վարկառուին, համավարկառուին ներկայացվող պահանջներ | ներկայացված են Հավելված 1.1-ում |
| 2.2 | Տույժեր, տուգանքներ | ներկայացված են Հավելված 1.5-ում |
| 2.3 | Էներգաարդյունավետ ներդրումների (նյութեր,պարագաներ,միջոցառումներ,սարքեր) ցանկ | ներկայացված է Հավելված 1.4-ում |
| 2.4 | Վերանորոգման աշխատանքների իրականացման ժամկետ | Վարկի տրամադրումից հետո առավելագույնը 1 տարի |
| 2.5 | Էներգաարդյունավետության գնահատում | Վարկի տրամադրումից առաջ Բանկը իրականացնում է էներգաարդյունավետության գնահատում՝ http://www.jermojakh.com/hy/ կայքում առցանց էներգահաշվիչ գործիքի օգնությամբ ձևավորված գնահատման հաշվետվության հիման վրա՝ վարկի նպատակայնության, ինչպես նաև վարկի գումարը որոշելու նպատակով |
| 2.6 | Վարկի մերժման գործոններ | Վարկի ոչ նպատակային օգտագործում, վարկառուի և/կամ համավարկառուի ոչ բավարար վարկային պատմություն, թերի ներկայացված փաստաթղթեր, անբավարար և/կամ բանկի կողմից ոչ ընդունելի եկամուտներ |
| 2.7 | Վարկերը տրամադրվում են Բանկի կողմից հաստատված տիպային պայմանագրերի օրինակելի ձևերի կիրառմամբ | |
| 2.8 | Վարկերը ներկայացվում են «Ազգային հիփոթեքային ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ-ի վերաֆինանսավորմանը: Վարկերը «Ազգային հիփոթեքային ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ-ի կողմից չվերաֆինանսավորելու կամ ֆինանսավորումը դադարեցնելու դեպքում վարկի տոկոսադրույքը ենթակա է վերանայման և սահմանման ՀՀ ԿԲ բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկի չափով | |
| 2.9 | «Ազգային հիփոթեքային ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ-ի կողմից վերաֆինանսավորման տոկոսադրույքի փոփոխման դեպքում Բանկն իրավասու է վերանայել տարեկան տոկոսադրույքը վերաֆինանսավորման տոկոսադրույքի փոփոխության չափով | |

*վարկի միջոցների նվազագույնը 40%-ը պետք է ուղղված լինի ԵՄ-ի էներգաարդյունավետության նվազագույն չափանիշներին համապատասխանող էներգաարդյունավետ ներդրումների իրականացմանը, այդ թվում՝ մինչև վարկի գումարի 20%-ը կարող է ուղղվել էներգախնայող կենցաղային սարքավորումների ձեռքբերմանը: Իրականացված բոլոր միջոցառումների առնվազն 80%-ը պետք է հիմնավորված լինի վճարումը հաստատող փաստաթղթերով, իսկ էներգաարդյունավետ միջոցառումների՝ 100%-ը:
Ընդ որում, վարկի գումարի նպատակային օգտագործումը՝ պետք է լինի փաստաթղթավորված՝ համաձայն հավելված 1.5-ի փաստաթղթերի ցանկի, եթե ձեռքբերումից բացի իրականացվել է նաև վերանորոգում, պետք է պահպանվել նախնական և վերջնական լուսանկարներ/տեսաերիզ:

** Արտոնյալ ժամանակահատվածը որոշվում է հաճախորդի կողմից, սակայն կարող է փոփոխվել (ավելացվել պայմաններով սահմանված թույլատրելի առավելագույն չափով) Բանկի կողմից՝ կախված վարկունակության գնահատումից

Վերանորոգման աշխատանքները վարկի տրամադրումից հետո առավելագույնը 1 տարվա ընթացքում չավարտվելու և/կամ վարկի գործողության ընթացքում 90 օր և ավել ժամկետանց պարտավորություններ ունենալու և/կամ վարկը ոչ նպատակային օգտագործելու դեպքերում վարկի վերաֆինանսավորումը ենթակա է դադարեցման, որի դեպքում գործում է 2.8 կետով սահմանված պայմանները

Բնակելի անշարժ գույքի մեկ միավորի գծով կատարվող վերանորոգման ներդրումների համար տրամադրվող վարկի առավելագույն քանակ և տրամադրված վարկերի հանրագումար սահմանված չէ
Սույն վարկատեսակի շրջանակում 1 վարկառուին տրամադրված վարկերի հանրագումարը չի կարող գերազանցել սույն վարկատեսակով սահմանված վարկի առավելագույն գումարը:

Գլխավոր էջ

**Հավելված 1.1**

<table>
<tr><th>Հ/Հ</th><th colspan="3">Վարկառուին, համավարկառուին (առկայության դեպքում) ներկայացվող պահանջներ և պայմաններ</th></tr>
<tr><td>1</td><td>Վարկառու/Համավարկառու</td><td colspan="2">ՀՀ քաղաքացի, ում եկամուտների հիմնական աղբյուրը գտնվում է ՀՀ-ում</td></tr>
<tr><td>2</td><td>Վարկառուի, համավարկառուի առավելագույն տարիք</td><td colspan="2">21 տարին լրացած ֆիզիկական անձ, որի տարիքը վարկի մարման վերջնաժամկետին չպետք է գերազանցի 65 տարեկանը</td></tr>
<tr><td rowspan="5">3</td><td rowspan="5">Հաճախորդի (վարկառու, համարկառու) վարկարժանության գնահատման ընդհանուր սկզբունքներ և վարկային պատմության նկատմամբ պահանջներ</td><td colspan="2">Եկամուտների վերլուծությամբ</td></tr>
<tr><td>3.1 Համաձայն Բանկի ներքին գնահատման</td><td>3.2 Ընդհանուր պարտքային վճարումների և զուտ եկամուտների առավելագույն հարաբերակցությունը (ԸՊԵ) չպետք է գերազանցի եկամուտների 45%-ը՝ համաձայն Հավելված 1.4-ի (Եկամուտներ), ընդ որում «Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոնից պատասխանի ստացման դեպքում հաճախորդից չի պահանջվում ներկայացնել փաստաթղթավորված եկամուտ, տեղեկատվության բացակայության դեպքում՝ համաձայն Հավելված 1.3-ով սահմանված փաստաթղթերի ցանկի</td></tr>
<tr><td colspan="2">3.3 Վարկային պատմության նկատմամբ ընդհանուր պահանջներ</td></tr>
<tr><td colspan="2">Վարկային պատմության բացակայություն կամ<br>Հայտի ընդունման պահին բանկային համակարգի նկատմամբ ժամկետանց կամ դասակարգված պարտավորությունների բացակայություն, վերջին 12 ամիսների ընթացքում ժամկետանց օրերի հանրագումարը առավելագույնը՝ 30 օր</td></tr>
<tr><td colspan="2"></td></tr>
<tr><td>4</td><td>Վարկառուի, համավարկառուի եկամուտների հաստատում</td><td colspan="2">3.2 կետով սահմանված դեպքում՝ Առաջնային և երկրորդային եկամուտների կազմը, վարկունակության գնահատման բանաձևում դրանց մասնակցության կշիռները ներկայացված են Հավելված 1.2-ում</td></tr>
<tr><td>5</td><td>Վարկառուին և համավարկառուին ներկայացվող այլ պահանջներ</td><td colspan="2">Բջջային հեռախոսահամարի և էլ. Փոստի հասցեի առկայություն</td></tr>
<tr><td>6</td><td>Այլ պահանջներ</td><td colspan="2">Եթե վարկառուն (կամ համավարկառուն) չի հանդիսանում վերանորոգվող գույքի առնվազն համասեփականատեր, ապա պետք է ներկայացնի բնակելի անշարժ գույքի սեփականատիրոջ/համասեփականատիրոջ գրավոր հայտարարությունն առ այն, որ վերջինս տեղյակ է և չի առարկում, որպեսզի իր բնակելի անշարժ գույքը վերանորոգվի**</td></tr>
<tr><td></td><td colspan="3">** Հայտարարությունը ներկայացվում է ազատ ոճով, նշելով տեղեկացվածության և համաձայնության վերաբերյալ 6-րդ կետով սահմանված համապատասխան տեքստը:</td></tr>
</table>

**Հավելված 1.2**

| Հ/Հ | Առաջնային եկամուտ | |
|---|---|---|
| | Եկամտի տեսակ | Կշիռը |
| 1 | Առաջնային եկամուտներ՝<br>- աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարները<br>- ձեռնարկատիրական գործունեության արդյունքում ստացվող եկամուտը (շահույթը) | 100% |
| | **Երկրորդային եկամուտների դասակարգում** | |
| | Եկամտի տեսակ | Կշիռը |
| 2 | Երկարամյա ծառայության կենսաթոշակ (Ոստիկանության, Պաշտպանության նախարարության, Քրեակատարողական և այլ համապատասխան մարմինների աշխատակիցների համար սահմանված) | 100% |
| 3 | Կենսաթոշակ, նպաստ, օգնություն, ընդ որում՝ անժամկետ նշանակված լինելու դեպքում | 100% |
| 4 | վարկառուի (համավարկառուի) սեփականությունը հանդիսացող գույքի վարձակալությունից եկամուտ /ընդ որում անշարժ գույքի դեպքում վարկառուն/համավարկառուն փաստացի այդ հասցեում չպետք է բնակվեն/՝ եթե գոյություն ունի հայտի ներկայացման օրվան նախորդող 12 ամիսների ընթացքում արդեն գործող և առնվազն 6 ամիս գործողության ժամկետ դեռ ունեցող օրենքով պատշաճ ձևով ձևակերպած պայմանագիր: | 100% |
| 5 | վարկառուի (համավարկառուի) սեփականությունը հանդիսացող անշարժ գույքի վարձակալությունից եկամուտ, (ընդ որում ներկայացված վարձավճարը պետք է համապատասխանի տվյալ տարածաժրջանի համար/տվյալ գույքի համար ընդունելի միջին շուկայական արժեքին և անշարժ գույքի դեպքում վարկառուն/համավարկառուն փաստացի այդ հասցեում չպետք է բնակվեն) եթե առկա է վարձակալության տրված անշարժ գույքի սեփականության վկայականը և/կամ վարձավճարը հավաստվում է բանկային քաղվածքով և առկա է վարձակալության պայմանագիր, որը կարող է նաև պատշաճ կերպով ձևակերպված չլինել: | 60% |
| 6 | վարկառուի (համավարկառուի) Պետական գանձապետական պարտատոմսերում, ՀՀ ԿԲ արժեթղթերում կամ այլ արժեթղթերում ներդրումներից ստացված եկամուտներ | |
| 7 | վարկառուի (համավարկառուի) կողմից պարբերաբար (առնվազն 12- ամսյա ժամանակահատվածում) վճարովի աշխատանքի կատարում կամ ծառայությունների մատուցում՝ առնվազն 6 ամիս գործողության ժամկետ ունեցող պայմանագրով հավաստված | |
| 7 | վարկառուի (համավարկառուի) կողմից արտասահմանից ստացված դրամական օգնություն (տրանսֆերներ, ուղարկողի մասին տվյալների առկայությամբ) հայտի ներկայացմանը նախորդող վերջին 12 ամիսների կտրվածքով փաստաթղթով հավաստված ՝ միջին ամսական չափով/ընդ որում վերջին 12 ամիսների ընթացքում անհրաժեշտ է առնվազն 9 անգամ փոխանցման առկայություն, փոխանցումների պարբերականությունը չպետք է գերազանցի 3 ամիսը/, 1 օրացուցային ամսվա ընթացքում ստացված բոլոր փոխանցումները դիտարկվում են որպես 1 փոխանցում | |

**Հավելված 1.3**

**«Ջերմ Օջախ» Բնակարանային միկրովարկ**

| # | Անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ | Փաստաթղթի տեղեկատվության ներկայացման ձևը/գործողության |
|---|---|---|
| **1. Հայտի նախնական ուսումնասիրության համար անհրաժեշտ տեղեկատվություն և փաստաթղթեր** | | |
| 1. | Վարկ ստանալու Դիմում-հայտ(եր) | բնօրինակ |
| 2. | Վարկառուի (համավարկառու(ներ)ի) անձը հաստատող փաստաթուղթ, սոցիալական քարտ (չունենալու դեպքում համապատասխան տեղեկանք) | բնօրինակ |
| 3. | Վերանորոգվող բնակելի անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական (անհրաժեշտության դեպքում) | բնօրինակ |
| 4. | Հաճախորդի վերաբերյալ տեղեկատվության տրամադրման վերաբերյալ Համաձայնություն (Հավելված 3) FO 75-17-01-14 (անհրաժեշտ չէ տեղեկատվության՝ դիմում-հայտում ներառված լինելու դեպքում) | բնօրինակ |
| **2. Հայտի վերլուծության համար անհրաժեշտ տեղեկատվություն և փաստաթղթեր** | | |
| 5. | Վարկառուի/համավարկառուի ամուսնության վկայական | բնօրինակ |
| 6. | Գնահատման հաշվետվություն՝ ներբեռնված http://www.jermojakh.com/hy/ կայք-էջից | պատճե (էլեկտրոնային կամ թղթային) |
| **2.1 Եկամուտները հիմնավորող փաստաթղթեր** | | |
| 7. | Վարկառուի (համավարկառու(ներ)ի) Տեղեկանք աշխատավայրից՝ տրված հաճախորդի (համավարկառու(ներ)ի) գործատուի կողմից, որը պարունակում է տեղեկանքի տրման ամսաթիվը, ելքի համարը, տվյալներ ներկայում զբաղեցրած պաշտոնի, տվյալ գործատուի մոտ անընդմեջ աշխատանքային ստաժի, վերջին 12 ամիսների փաստացի ստացված եկամտի չափի վերաբերյալ (Պահանջվում է «Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոնից ստացված տեղեկատվության բացակայության դեպքում) | բնօրինակ /60 օր |
| 8. | Անհատական հաշվի քաղվածք տրված ՊԵԿ-ի կողմից, իսկ վերջինիս ներկայացման անհնարինության դեպքում՝<br>Ուժային կառույցների աշխատակիցների դեպքում՝ բանկային հաշվի քաղվածք<br>ԱԱԾ աշխատակիցների դեպքում՝ միայն 10-րդ կետով նկարագրված տեղեկանք (Պահանջվում է «Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոնից ստացված տեղեկատվության բացակայության դեպքում) | բնօրինակ |
| | | |
| **2.2Երկրորդային եկամուտները (առկայության դեպքում) հիմնավորող փաստաթղթեր** | | |
| 9. | Գույքի վարձակալության պայմանագրեր (առկայության դեպքում նաև վարձակալության իրավունքի գրանցման վկայական) | բնօրինակ |
| 10. | Բանկում և (կամ) այլ ֆինանսական հաստատություններում ներդրված դրամական միջոցներից (ավանդից) ստացված տոկոսները հիմնավորող փաստաթղթեր՝ պայմանագիր, դրամարկղի ելքի օրդեր, համապատասխան հաշվի քաղվածք | բնօրինակ |
| 11. | Պետական գանձապետական պարտատոմսերում, այլ արժեթղթերում ներդրումներից ստացված եկամուտները հիմնավորող փաստաթղթեր | բնօրինակ |
| 12. | Վճարովի աշխատանքի կատարումը կամ ծառայությունների մատուցումը հիմնավորող փաստաթղթեր (Ծառայությունների մատուցման պայմանագրեր, տեղեկանք, հայտարարագրեր՝ տրված ֆիզ. անձանց կողմից և նրանց անձը հաստատող փաստաթղթերը և այլն) | բնօրինակ |
| 13. | Ստացված դրամական օգնությունը (տրանսֆերներ) հիմնավորող փաստաթղթեր | բնօրինակ |
| 14. | Վերջին 12 ամիսների փաստացի ստացված եկամտի վերաբերյալ հաշվի քաղվածք, անհրաժեշտության դեպքում՝ 9-17 կետերում ստացվող եկամուտները հիմնավորելու համար, եթե եկամուտները ստացվում են բանկային հաշվին | բնօրինակ |
| 15. | Կենսաթոշակի նշանակման վկայական և բանկային հաշվի քաղվածք (առնվազն 1 մուտքի առկայությամբ) | բնօրինակ |
| **3. Վարկի ձևակերպման համար հաճախորդից պահանջվող փաստաթղթեր** | | |
| 16. | Հաճախորդի բանկային հաշվի պայմանագիր, որին պետք է փոխանցվի վարկի գումարը | պատճե |
| **4. Այլ փաստաթղթեր** | | |
| 17. | Միայն վերաֆինանսավորողի պահանջով (գրավոր կամ բանավոր)՝ այլ փաստաթղթեր, որոնք կհիմնավորեն որակավորված վարկ լինելու հանգամանքը և/կամ ցանկացած այլ փաստաթղթեր | բնօրինակ |
| 18. | Այլ փաստաթղթեր վարկի նպատակային օգտագործման հաստատման համար (հաշիվ ապրանքագիր, վճարումը հավաստող այլ հիմք (ՀԴՄ կտրոն/անդորրագիր՝ ապրանքի/ծառայության նկարագրությամբ,վճարման հանձնարարական, առաքման փաստաթուղթ, ստացական, ընդունման-հանձնման ակտ, ներդրումները հիմնավորող նկարներ/տեսաերիզ) | բնօրինակ կամ պատճե՝ կախված պահանջվող փաստաթղթի բնույթից |

*8-րդ կետում նշված փաստաթղթերը չեն պահանջվում հետևյալ կազմակերպությունների աշխատակիցներից.
- Պետական հիմնարկներ և 50% և ավելի պետական մասնակցություն ունեցող կազմակերպություններ,
- ՀՀ կենտրոնական բանկի կողմից շնորհված Ա-Գ վարկանիշ և (կամ) լիցենզիա ունեցող կազմակերպություն՝ բացառությամբ գրավատների
- Այլ երկրների պետական մասնակցություն ունեցող կազմակերպություններ (այդ թվում՝ դեսպանատներ, հյուպատոսական ներկայացուցչություններ), ինչպես նաև 50% և ավել միջազգային կազմակերպություններին կամ այլ պետություններին պատկանող կազմակերպություններ,
-Վերջին հաշվետու ժամանակաշրջանի համար հրապարակած ՀՀ 50 խոշոր հարկատուներ

*Բանկի ներքին իրավական ակտ(եր)ով նախատեսված դեպքերում և (կամ) ելնելով տարբեր ծրագրերով վարկավորման առանձնահատկություններից՝ սույն ցանկով նախատեսված որոշ փաստաթղթեր, և/կամ դրանց ներկայացվող պահանջները կարող են չպահանջվել կամ պահանջվել առանձին որոշումներով նախատեսված լրացուցիչ փաստաթղթեր*

Հավելված 1.4

| Հ/Հ | էներգաարդյունավետ միջոցառումների և կենցաղային տեխնիկայի ցանկ* |
|---|---|
| 1 | **Նորոգման միջոցառումներ** |
| 1.1 | Շենքի արտաքին մակերես |
| 1.2 | Ջեռուցում և հովացում |
| 1.3 | Արևային |
| 1.4 | Լուսավորություն |
| 2 | **Ֆինանսավորվող միջոցառումների տեսակ** |
| 2.1 | Պատի ջերմամեկուսացում |
| 2.2 | Տանիքի ջերմամեկուսացում |
| 2.3 | Պատուհանների փոխարինում |
| 2.4 | Հիմնական դռան փոխարինում |
| 2.5 | Կաթսայի փոխարինում |
| 2.6 | Ջեռուցման համակարգի փոխարինում |
| 2.7 | Օդի լավորակում |
| 3 | **Ֆինանսավորվող միջոցառումների շրջանակում օգտագործվող նյութերի, պարագաների,սարքավորումների ցանկ** |
| 3.1 | **Նյութեր** |
| 3.1.1 | Պոլիուրետան |
| 3.1.2 | Հանքային բամբակ |
| 3.1.3 | Պեռլիտ |
| 3.1.4 | XPS |
| 3.1.5 | EPS |
| 3.2 | **Տեխնիկա/սարքավորումներ** |
| 3.2.1 | Կոնդենսացիոն կաթսա |
| 3.2.2 | Սովորական կաթսա |
| 3.2.3 | Օդորակիչ |
| 3.2.4 | Էլեկտրական ջրատաքացուցիչ |
| 3.2.5 | Էլեկտրական սալօջախ /4 սալիկով/ |
| 3.2.6 | Էլեկտրական կամ գազի ջեռոց (խոհանոցային վառարան) |
| 3.2.7 | Օդաքաշ պահարան |
| 3.2.8 | Սառնարան սառցախցիկով (մինչև 200լ) |
| 3.2.9 | Սառնարան սառցախցիկով (մինչև 100լ) |
| 3.2.10 | Լվացքի մեքենա |
| 3.2.11 | Արևային ֆոտովոլտային համակարգ |
| 3.2.12 | Արևային ջրատաքացուցիչ |
| 3.2.13 | Լուսադիոդային լամպ |
| 3.2.14 | Մետաղական հալոգեն լամպ |
| 3.2.15 | Պոլիստիրոլի ընդլայնված խեժ/փրփրաթերթ |
| 3.2.16 | Պոլիստիրոլի մամլված խեժ |
| 3.2.17 | Քարեբուրդ |
| 3.2.18 | Փրփուր պոլիուրեթանային |

* Սույն ցանկի և http://www.jermojakh.com/hy/ առցանց գործիքի անհամապատասխանության դեպքում նախապատվությունը տրվում է առցանց գործիքում առկա ցանկին

Գլխավոր էջ

**Հավելված 1.5**

| Հ/Հ | **Տույժեր, տուգանքներ** | |
|---|---|---|
| 1 | Վարկառուի կողմից պարտավորությունների չկատարման դեպքում կիրառվող տոկոս, տույժ | 24% տարեկան՝ վարկի հիմնական գումարի ժամկետանցման դեպքում |
| | | 48% տարեկան՝ ժամկետանց տոկոսի տույժ |
| 2 | Վարկի վաղաժամկետ մարման դեպքում | չի սահմանվում |
| 3 | Վարկի ոչ նպատակային օգտագործման դեպքում | Բանկն իրավունք ունի. |
| | | 1. վարկառուից պահանջել վարկի գումարի վաղաժամկետ մարում |
| | | 2. միակողմանիորեն վերանայելու վարկի տոկոսադրույքը՝ սահմանելով ՀՀ ԿԲ հաշվարկային դրույքի կրկնապատիկի չափով |